Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Հրահանգ

- **Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-12, 19.1, 23.1, 23.2)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, որտեղ դրել եք **X** նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **1. Ո՞ր սկզբունքն է ենթադրում, որ մարդու իրավունքներից մեկի խախտումը բացասաբար է անդրադառնում մյուս իրավունքների իրացման վրա:**

ա) իրավունքների հիերարխիկությունը,

բ) իրավունքների անխախտելիությունը,

գ) Իրավունքների համընդհանուրությունը,

դ) Իրավունքների փոխկախվածությունը:

(1) **2. Ո՞րն է «պոզիտիվ պարտավորությունների» հայեցակարգի էությունը մարդու իրավունքների Իրավունքում:**

ա) Անհատների պարտավորությունը՝ հարգել մյուս մարդկանց միջազգայնորեն ճանաչված իրավունքները:

բ) Պետության պարտավորությունը՝ ձեռնարկել կոնկրետ միջոցներ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

գ) Պետության պարտավորությունը՝ զերծ մնալ իր քաղաքացիների իրավունքները խախտելուց:

դ) Միջազգային կազմակերպությունների պարտավորությունը՝ լիովին և պատշաճ կերպով տրամադրել փոխհատուցում:

(1) **3. Ի՞նչ է նշանակում դիվիդենտը տնտեսական գործունեության մեջ:**

ա) Դրամական ներդրումների կամ պարտքային պարտավորությունների հետ կապված պարտքային ցանկացած պահանջներից ստացված ցանկացած նախապես հայտարարված եկամուտ:

բ) Հարկ վճարողի կողմից սահմանված ժամկետում չվճարված հարկերի կամ պատժամիջոցների գումարի և հարկային գերավճարների և/կամ պատժամիջոցների գումարի միջև տարբերությունը:

գ) Բաժնետոմսերից կամ բաժնեմասերից ստացած բաժնետիրոջ եկամուտը, որը ձեռք է բերվում շահույթի բաշխման արդյունքում՝ կապիտալում իրեն պատկանող բաժնետոմսերի համամասնությամբ կամ առանց համամասնության պահպանման:

դ) Հարկ, որը սահմանվում է որպես ներմուծվող ապրանքների կամ տրամադրված ծառայության հավելագին և որը վճարում է ներմուծողը այդ հարկով ավելացած արժեքով ապրանքները կամ ծառայությունները ներմուծելիս:

(1) **4. Հարկերի թվարկված տեսակներից ո՞րն է համարվում տեղական և ոչ թե ընդհանուր-պետական հարկ՝ ըստ Վրաստանի օրենսդրության:**

ա) Գույքահարկ,

բ) շահութահարկ,

գ) ներմուծման հարկ,

դ) եկամտահարկ:

(1) **5. Ինչպե՞ս է նեոլիբերալ քաղաքականությունն ազդում պետական տնտեսության վրա:**

ա) Վերացնում է կապիտալիզմը և տեղափոխում երկրները պլանային տնտեսությունների:

բ) Պաշտպանում է տեղական արտադրությունը և շուկաները գլոբալ ազդեցություններից:

գ) Մեծացնում է հանրային հատվածը, հաստատում է պետական սեփականություն և խստացնում է կարգավորումները:

դ) Նպաստում է ազատ շուկային, ապակարգավորմանն ու հանրային ծառայությունների սեփականաշնորհմանը:

(1) **6. Վրաստանի Սահմանադրության պրեամբուլայում նշված է ժողովրդավարական հասարակական իրավակարգ հաստատելու քաղաքացիների անկոտրում կամքը: Նշված իրավակարգի մասին ո՞ր պնդումն է սխալ:**

ա) Ժողովրդավարական հասարակական իրավակարգն ապահովում է փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, բազմակարծությունը և պետական իշխանության պատասխանատվությունը հանրության նկատմամբ:

բ) Ժողովրդավարական հասարակական իրավակարգը ենթադրում է իշխանության բաշխում, հսկողության մեխանիզմների առկայություն և քաղաքական կյանքում քաղաքացիների ակտիվ մասնակցություն:

գ) Ժողովրդավարական հասարակական իրավակարգը հիմնված է ժողովրդի ինքնիշխանության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ արտահայտման և հավաքների ազատության վրա:

դ) Ժողովրդավարական հասարակական իրավակարգը պահանջում է կառավարության լիարժեք վերահսկողություն հանրության նկատմամբ՝հասարակական կարգը և անվտանգությունը ցանկացած մեթոդով պահպանելու նպատակով:

(1) **7. Ի՞նչ հիերարխիա է ներկայացված առաջադրանքում տրված դիագրամում:**



ա) Թափոնների կառավարում

բ) Նավթի արդյունահանում

գ) Արտադրության զարգացում

դ) Ռեսուրսների մոբիլիզացում

(1) **8. Ո՞ր պնդումն է ճիշտ ներկայացնում արժեքային կոնֆլիկտի և շահերի բախման միջև տարբերությունը:**

ա) Արժեքային կոնֆլիկտի և շահերի բախման միակ իրական տարբերությունը դրանց մասշտաբն է: Արժեքային կոնֆլիկտները սովորաբար ավելի լայնածավալ և գլոբալ են, մինչդեռ շահերի բախումները լոկալ են և իրենցից ներկայացնում են խառնաշփոթ կոնկրետ կողմերի միջև:

բ) Ելնելով նրանից, որ արժեքային կոնֆլիկտները վերաբերում են ներքին, սուբյեկտիվ համոզմունքներին, դրանց կառավարումն ու վերլուծությունը հնարավոր է միայն հոգեբանական մեթոդներով, մինչդեռ արտաքին, օբյեկտիվ փաստերին վերաբերող շահերի բախումները կարող են կարգավորվել տնտեսական և քաղաքական գործիքների կիրառմամբ:

գ) Արժեքային կոնֆլիկտի հիմքը անհամատեղելի հիմնարար սկզբունքներն ու բարոյական համոզմունքներն են, որոնք սահմանում են վարքը, մինչդեռ շահերի բախումը ծագում է սահմանափակ ռեսուրսներին տիրապետելու ցանկությունից և շեշտը դրվում է ոչ թե նրա վրա, թե ինչն է ինքնին ճիշտ, այլ թե ինչ օգուտ է ստանալու յուրաքանչյուր կողմը:

դ) Արժեքային կոնֆլիկտներն ավելի պրիմիտիվ են և տարածված են զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող հասարակություններում, որտեղ գերակշռում են ավանդական նորմերը և տարբերվող տեսակետների նկատմամբ անհանդուրժողականությունը, մինչդեռ զարգացած հասարակություններում հիմնականում գերակշռում են շահերի բախումները, որոնք ավելի քաղաքակիրթ ճանապարհով են կարգավորվում:

(1) **9. Ընթերցե՛ք մեջբերումը Թոմաս Հոբսի «Լեվիաթան» աշխատությունից և պատասխանե՛ք հարցին.**

«Քանի դեռ մարդիկ չունեն ընդհանուր իշխանություն, որը բոլորին ակնածանքի վիճակում կպահի, նրանք պատերազմ կոչվող իրավիճակում են գտնվում և դա բոլոր մարդկանց պատերազմն է բոլոր այլ մարդկանց դեմ: Քանի որ պատերազմը միայն պայքարի կամ առճակատման պահ չէ, պատերազմ է կոչվում ժամանակի այն հատվածը, երբ բավարար չափով պարզ է պայքարի միջոցով առճակատման կամքը»:

Համաձայն մեջբերման՝ ինչո՞ւ է Հոբսն անհրաժեշտ համարում ընդհանուր իշխանությունը և ինչպե՞ս է դա կապված նրա կողմից առաջարկվող «հասարակական դաշինքի» գաղափարի հետ:

ա) Քանի որ ընդհանուր իշխանությունն ավարտում է բնական վիճակը և ստեղծում կարգ ու կանոն, որը հիմնված է հասարակական դաշինքի վրա:

բ) Քանի որ ընդհանուր իշխանությունը քաղաքացիներին անսահմանափակ ազատություն է շնորհում, ինչը բացառում է հասարակական դաշինքին:

գ) Քանի որ իշխանությունը երաշխավորված է Աստծո կողմից և պետության պարտավորությունն է պաշտպանել մարդկանց բռնատիրական կառավարումից:

դ) Քանի որ իշխանությունն անհրաժեշտ է երկիրն արտաքին թշնամիներից պաշտպանելու համար, մինչդեռ պետության ներքին կարգը բնականորեն է ձևավորվում:

(1) **10. Ընթերցե՛ք Ալեքսիս դը Տոկվիլի Հարիետ Գրոտեին ուղղված նամակի հատվածը և պատասխանե՛ք հարցին.**

«Դուք պաշտպանում եք այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է մեր հասարակության հին համակարգը Եվրոպայում, ինչպես նաև ազատությունն ու դրան ուղեկցող անհատական պատասխանատվությունը: Դուք հատկապես պաշտպանում եք սեփականության իրավունքի հաստատումը: Բացարձակապես ճիշտ եք: Ե՛վ դուք, և՛ ես դժվար ենք պատկերացնում կյանքն առանց այս կարևորագույն օրենքների:

Խոստովանում եմ, սակայն, որ այս հին աշխարհը, որից այն կողմ մեզանից ոչ ոք ոչինչ չի տեսնում, ասես ուր որ է մաշվելու է, այս հսկայական և հարգարժան մեքենան օրեցօր սպառում է իր մեխանիզմները: Եվ չնայած նրան, որ առաջ չեմ կարողանում նայել, ներկայի շարունակականության հանդեպ իմ հավատը սասանված է... Սակայն պարկեշտ ու վեհանձն մարդկանց՝ իրենց հասկացած միակ համակարգը պաշտպանելու և նույնիսկ կյանքը զոհաբերելու պարտավորությունը չի նվազի, եթե նրանց չառաջարկեն ավելի լավ համակարգ»:

Քաղաքական ո՞ր գաղափարախոսության սկզբունքների մասին է խոսում հեղինակը տրված հատվածում:

ա) Անարխիզմ,

բ) պոպուլիզմ,

գ) սոցիալիզմ,

դ) կոնսերվատիզմ:

(1) **11. Ինֆոգրաֆիկայում պատկերված են Վրաստանի բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատություններում անցկացված հետազոտությունների վերաբերյալ տվյալներ.**



Ո՞ր պնդումն է համապատասխանում ինֆոգրաֆիկայի տվյալներին:

ա) Նախորդ տարվա համեմատ, 2021 թվականին բարձրագույն ուսումնական և գիտական հաստատությունների թիվն աճել է, մինչդեռ կատարվող աշխատանքների ծավալը՝ նվազել:

բ) 2021 թվականին բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններում և՛ աշխատողների, և՛ հետազոտողների շրջանում կանայք ավելի շատ են, քան տղամարդիկ:

գ) 2021 թվականին բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններում 65 տարեկանից բարձր աշխատողների շրջանում կանայք ավելի շատ են, քան տղամարդիկ:

դ) 2021 թվականին բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններում աշխատողների տարիքային բոլոր խմբերում գերակշռում են տղամարդիկ:

(1) **12. Առաջադրանքում ներկայացված է 2010-2023 թվականներին տարբեր երկրներ արտահանված ապրանքների և ծառայությունների արժեքը.**



Տվյալների հիման վրա արված ո՞ր եզրակացությունն է ճիշտ:

ա) Մոլդովայի արտահանվող ապրանքների և ծառայությունների արժեքը 2020 թվականին համավարակի պատճառով չի նվազել, իսկ 2023 թվականին՝ կրկնապատկվել է, ինչից ելնելով այլ երկրների շարքում Մոլդովան հայտնվել է առաջատարի դիրքում:

բ) Ղրղզստանի արտահանվող ապրանքների և ծառայությունների արժեքը 2010 թվականից ի վեր ամեն տարի աճել է և 2023 թվականին, ի տարբերություն այլ երկրների, ունեցել է ամենաբարձր ցուցանիշը:

գ) Վրաստանի արտահանվող ապրանքների և ծառայությունների արժեքը 2010 թվականից ի վեր անդադար աճել է և 2023 թվականին գերազանցել է 8 միլիարդ դոլարը՝ հասնելով պատմական առավելագույնի:

դ) 2010-2019 թվականներին Լիբանանի արտահանվող ապրանքների և ծառայությունների արժեքն ի տարբերություն այլ երկրների բարձր մակարդակի վրա էր, սակայն 2020 թվականին կտրուկ անկում է ապրել և հաջորդ տարիներին երկրին չի հաջողվել վերադառնալ նախկին մակարդակին:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№13)

Առաջադրանքում ներկայացված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(1) **13. Հաջորդականությամբ դասավորեք սխեմայում ներկայացված Վրաստանի քաղաքացու իրավունքների տարիքային ցենզի փուլերը.**

1. Մասնակցել երդվյալ ատենակալների դատարանում
2. Ընտրվել Վրաստանի նախագահ
3. Նշանակվել Ընդհանուր դատարանի դատավոր
4. Ընտրվել Վրաստանի խորհրդարանի անդամ
5. Նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր

	4*			

* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը:

Հրահանգ

Համապատասխանության որոշում (№14, 15, 16)

Առաջադրանքում երկու սյունակով ներկայացված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում տրված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(2) **14. I սյունակում ներկայացված ԶԼՄ-ների քաղաքական նշանակությանը համապատասխանեցրեք II սյունակում ներկայացված քաղաքականության վրա ԶԼՄ-ների ազդեցության մոդելները:**

I. ԶԼՄ-ների քաղաքական նշանակությունը	II. Մոդելներ
ա) Մեդիան հիմնականում պաշտպանում է տնտեսապես հզոր սոցիալական շերտերի շահերը և նպաստում կապիտալիստական գերիշխանության ամրապնդմանը, ինչը դրսևորվում է բուրժուական գաղափարների քարոզչությամբ և հանրությանը լիովին կողմնակալ քաղաքական տեսակետ մատուցելով:	1. Բազմակարծական 2. Ազատ շուկայական 3. Գերիշխող-գաղափարախոսական 4. Վերնախավին հնազանդ
բ) Մեդիան, առաջին հերթին, բիզնես է, որն ամբողջությամբ կենտրոնացած է շահույթի վրա: Քաղաքական գործընթացներին համամասնակցությունը մեդիայի համար անհրաժեշտություն չի համարվում: Ուստի, այն բացառում է ցանկացած քաղաքական հայացքի նկատմամբ կողմնակալություն և պահպանում է հանրային տրամադրությունները/շահերը ներկայացնելու իր գործառույթը:	
գ) Մեդիայի դերը հիմնականում հանրությանը իրազեկելն է: Այն անաչառորեն ներկայացնում է երկրում գոյություն ունեցող քաղաքական հայացքների լայն սպեկտրը և փորձում է հավասարակշռել հասարակության տարբերվող ուժերը:	
դ) Մեդիան զենք է քաղաքականապես կողմնակալ խմբերի, սուբյեկտիվ խմբագիր-հրատարակիչների կամ լրագրողների ձեռքում, որը լուսաբանում է քաղաքական հայացքների նեղ շրջանակը: Նրա կանխակալ քաղաքական գործունեությունը արտացոլում է այն խմբի արժեքները, որը մեծամասնությամբ է ներկայացված լրատվամիջոցներում աշխատող ավագ մասնագետների շրջանում:	

(2) **15. Առանձնացնում են մարդու իրավունքների և ազատությունների զարգացման տարբեր փուլերը, այսինքն՝ սերունդները: Որոշեք համապատասխանությունը I սյունակում թվարկված մարդու իրավունքների և II սյունակում թվարկված մարդու իրավունքների սերունդների միջև:**

I. Մարդու իրավունքներ	II. Մարդու իրավունքների սերունդներ
ա) Խոսքի ազատություն	1. Առաջին սերնդի իրավունքներ 2. Երկրորդ սերնդի իրավունքներ 3. Երրորդ սերնդի իրավունքներ
բ) Հավատքի ազատություն	
գ) Մշակութային ժառանգությունը պահպանելու իրավունք	
դ) Կենսաբազմազանության իրավունք	
ե) Անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի իրավունք	

(1) **16. Քարտեզը պատկերում է գենդերային *անհավասարության* աստիճանը աշխարհի տարբեր երկրներում 2019 թվականին: I սյունակում տրված երկրներին համապատասխանեցրե՛ք II սյունակում տրված աստիճանները:**



I. Երկրներ	II. Գենդերային անհավասարության աստիճան
ա) Չինաստան	1. Շատ ցածր 2. Ցածր 3. Միջին 4. Բարձր 5. Շատ բարձր
բ) Իսպանիա	
գ) Աֆղանստան	
դ) Իրան	
ե) Բրազիլիա	

Հրահանգ

Սխալի ուղղում (№17)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Հաշվի առեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(7) **17. Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Վրաստանը միջազգային հարաբերություններում

Միջազգային հարաբերությունների պատմությունը սկիզբ է առնում հին քաղաքակրթություններից, երբ երկրները միմյանց հետ կապվեցին դիվանագիտությամբ, առևտրով, պատերազմներով և այլ գործունեությամբ: Միջազգային հարաբերությունների համար բեկումնային տարեթիվ է համարվում 1648 թվականի Վեստֆալյան հաշտության պայմանագիրը, որը միջպետական հարաբերություններում ներմուծեց հեղինակության ժամանակակից ըմբռնումը, այսինքն՝ անկախ, ինքնավար պետության սահմաններին և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:

Միջազգային հարաբերությունների տեսանկյունից քսաներորդ դարը ականատես եղավ մեծ փոփոխությունների: Երկու համաշխարհային պատերազմները, գաղութային կայսրությունների փլուզումը և այլ կարևոր իրադարձություններ նպաստեցին այնպիսի միջազգային կազմակերպությունների ձևավորմանը, որոնց առաքելությունն է խթանել պետությունների միջև խաղաղությունը, անվտանգությունը և համագործակցությունը: Այդ կարևոր իրադարձություններից էր Սառը պատերազմը, որը սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իսկ ավարտվելու տարեթիվ համարվեց Խորհրդային Միության փլուզման տարեթիվը՝ 1995 թվականի դեկտեմբերի 26-ը:

Միջազգային կազմակերպությունների շրջանում ամենաբազմանդամն է Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որը ստեղծվել է 1949 թվականին և այսօրվա դրությամբ միավորում է աշխարհի պետությունների մեծ մասը: Խաղաղություն և անվտանգություն ապահովելուց բացի, ՄԱԿ-ի նպատակների թվում են տնտեսական զարգացման խթանումը, մարդու իրավունքների ժողովրդականացումը և մարդասիրական օգնության ցուցաբերումը: ՄԱԿ-ը կառուցվածքային առումով բազմատարր կազմակերպություն է: Այն բաղկացած է վեց հիմնական մարմիններից՝ Գլխավոր ասամբլեա, Անվտանգության խորհուրդ և այլն: ՄԱԿ-ի համակարգը ներառում է նաև այլ օժանդակ մարմիններ, մասնագիտացված հաստատություններ,

Անցնել տեքստի երկրորդ էջին

միջազգային կազմակերպություններ: Օրինակ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն և այլ սուբյեկտներ:

Չնայած նրան, որ կայունություն ապահովելու համար ՄԱԿ-ն ունի խաղաղապահ առաքելություններ իրականացնելու հնարավորություն, այն միևնույն է չի համարվում ռազմական տիպի կազմակերպություն: Հետևաբար, այն պակաս արդյունավետ է, երբ հարցը վերաբերում է զինված հակամարտությունների լուծմանը: Այս առումով կարևոր է Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության գոյությունը, որը հենց ռազմաքաղաքական միություն է: Կազմակերպության գլխավոր շտաբ-բնակարանը գտնվում է Ստրասբուրգում: ՆԱՏՕ-ի առկայությունը անդամ երկրների տարածքներում նպաստել է երկարատև խաղաղության հաստատմանը: Վրաստանը ՆԱՏՕ-ի հետ երկարատև համագործակցության պատմություն ունի: Տարբեր ժամանակներում ՆԱՏՕ-ի հովանու ներքո Վրաստանը մասնակցել է Կոսովոյում և Մոնղոլիայում իրականացվող խաղաղապահ առաքելություններին: 2003-2008 թվականներին Վրաստանի պաշտպանության ուժերը միացել են ԱՄՆ-ի գլխավորած գործողությանը, որի նպատակն էր զարգացնել Իրաքի պաշտպանական կարողությունները:

Միջազգային կազմակերպությունների շարքում առանձնահատուկ է նաև Եվրամիությունը, որն իրենից ներկայացնում է եվրոպական պետությունների քաղաքական միավորում: Եվրամիության օրենսդիր մարմինը Եվրախորհրդարանն է, որը կարևոր օրենսդրական շրջանակ է ստեղծում՝ եվրոպական մայրցամաքում խաղաղություն և կայունություն ապահովելու նպատակով: Վրաստանը անկախության հռչակումից քիչ ժամանակ անց սկսել է համագործակցել Եվրամիության հետ և նրա հստակ քաղաքական որոշումը այս միությանն անդամակցելն է: Արևմտյան աշխարհին ինտեգրվելու ճանապարհին Վրաստանի պետությունը կարևոր քայլ կատարեց 1999 թվականի ապրիլի 27-ին, երբ դարձավ Եվրահանձնաժողովի անդամ: Այս ճանապարհին Վրաստանի մեծ հաջողությունը 2014 թվականին Եվրամիության հետ ասիմիլյացիայի համաձայնագիր կնքելն է, իսկ 2023 թվականին՝ ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ ստանալը:

Վերադառնալ տեքստի առաջին էջին

Հրահանգ

Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№ 18, 19.2, 19.3, 20, 21, 22, 23.3-23.7)

Ուշադրությամբ ծանոթացեք առաջադրանքի պայմանին: Պատասխանների թերթիկի համապատասխան տեղում գրեք առաջադրանքի պայմանին համարժեք, կոնկրետ, հստակ ձևակերպված պատասխանը: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

(4) **18. Սխեման մասամբ է արտացոլում ներկայացված պետությունների տարածքային-քաղաքական կարգը: Լրացրե՛ք աղյուսակը.**

Պետություն	Պետության տարածքային կարգը	Օրենսդիր մարմնի (խորհրդարանի) անվանումը	Կառավարման ձև
Իսրայել	18.1	Քնեսեթ	Խորհրդարանական հանրապետություն
Գերմանիա	Դաշնային (ֆեդերատիվ)	18.2	Խորհրդարանական հանրապետություն
Շվեդիա	Ունիտար	Ռիքսդագ	18.3
18.4	Ունիտար	Գերագույն ռադա	Կիսանախագահական հանրապետություն

(3) **19.** Ներկայացված է 2024 թվականի աշխարհի քարտեզն առանց լեգենդի: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանե՛ք հետևյալ հարցերին.



(1) **19.1 Ի՞նչ է պատկերված տվյալ քարտեզի վրա:**

ա) Խաղաղության մակարդակը,

բ) օրենքի գերակայությունը,

գ) կյանքի տևողությունը,

դ) տնտեսական զարգացումը:

(1) **19.2 Քարտեզի տվյալների հիման վրա գնահատեք սկանդինավյան երկրներում առկա իրավիճակը:**

(1) **19.3 Դատողություն արեք ցածր ցուցանիշներ ունեցող երկրներում առկա իրավիճակի հնարավոր պատճառները:**

(5) **20. Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.**

I. Որոշեք և գրեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից: *(Առաջադրանք 20.2)*

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք կնպաստեն աղյուսակում տրված II խնդրի կատարմանը: *(Առաջադրանք 20.3)*

III. Որոշեք և գրեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: *(Առաջադրանք 20.1)*

(1)	20.1	<u>Նախագծի նպատակը.</u> *(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով):*
(1)	20.2	<u>Նախագծի I խնդիրը.</u> *(որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով I խնդրի իրականացման ուղիներից):* <u>Նախագծի II խնդիրը.</u> **Աշակերտների մոտ քննադատական մտածողության և քաղաքական ապատեղեկատվության նկատմամբ տոկունության ամրապնդում:**
(3)	20.3	<u>I խնդրի իրականացման ուղիներ.</u> 1. Աշակերտների մասնակցությամբ կազմակերպել կոնֆերանս՝ «Ընտրությունների դերը և ակտիվ քաղաքացիության նշանակությունը» թեմայով: 2. Ընտրություններին հրավիրել դիտորդական առաքելություն ունեցող կազմակերպության ներկայացուցչի և աշակերտների համար անցկացնել դասախոսություն «Արդար ընտրություններ» թեմայով: 3. Դասարանում անցկացնել սիմուլյացիոն ընտրություններ: <u>II խնդրի իրականացման ուղիներ.</u> *(գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղիներ):* 1. 2. 3.

(4) 21. Ծանոթացե՛ք նկարին և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

(1) 21.1 Ո՞րն է նկարի գլխավոր գաղափարը:

(1) 21.2 Կառավարման ո՞ր համակարգն է նկարագրում տրված նկարը:

(2) 21.3 Դատողություն արեք, թե որ մեխանիզմն է ապահովում նկարով արտահայտված գաղափարը և ինչպես է այն նպաստում հասարակության զարգացմանը:

(5) **22. Ծանոթացե՛ք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.**

«Հզոր արհեստական բանականության AI համակարգերը պետք է զարգանան միայն այն դեպքում, երբ վստահ լինենք, որ արդյունքը դրական է լինելու, իսկ ռիսկերը՝ հաղթահարելի: Այս ինքնավստահությունը պետք է լինի լավ հիմնավորված և աճի համակարգի հնարավոր արդյունքների աճին զուգընթաց:

Հետևաբար, մենք կոչ ենք անում բոլոր AI լաբորատորիաներին առնվազն 6 ամսով անհապաղ դադարեցնել AI համակարգերի զարգացումը: Այս դադարեցումը պետք է լինի հրապարակային և բաց, և ներառի գործընթացում ներգրավված բոլոր հիմնական մասնակիցներին: Եթե նման դադարեցումը շտապ կարգով չիրականացվի, ապա գործին պետք է միջամտի կառավարությունը և սահմանի մորատորիում»:

Խնդրագիր «Դադարեցնե՛լ արհեստական բանականության փորձարկումները», 2023 թվականի մարտի 22:

(1) 22.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության շուրջ:

(4) 22.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա էականորեն տարբերվող իմաստ)

(9) 23. Վերլուծեք տրված աղբյուրները և պատասխանեք հարցերին.

Աղբյուր N1	Աղբյուր N2
 Ֆրանսիական հեղափոխության (1789-1799) ժամանակաշրջանի փորագրություն, որը պատկերում է Մաքսիմիլիեն Ռոբեսպիերին գիլիոտինների ֆոնի վրա:	 ПРОТОКОЛ № 14 Индекс (т.Берия) 1. Констатировать, что самоубийство П.ЯШВИЛИ, разоблаченного как шпиона и врага народа, является провокационным выпадом против партии и Советской власти, а поэтому похоронить его как врага народа. 2. Поручить тов.БЕРИЯ проинформировать Президиум Союза Советских писателей Грузии о контрреволюционной, шпионской и вредительской работе П.ЯШВИЛИ. СЕКРЕТАРЬ ЦК КП(б)Г: **Կոմկուսակցության Կենտրոնական կոմիտեի արձանագրություն, 1937թ.** «1. Հարկ է նշել, որ Պ. Իաշվիլիի ինքնասպանությունը, ով հայտնի է որպես լրտես և ժողովրդի թշնամի, իրենից ներկայացնում է սադրիչ արարք կուսակցության և խորհրդային իշխանության դեմ, ուստի նա պետք է հուղարկավորվի որպես ժողովրդի թշնամի: 2. Ընկեր Բերիային հանձնարարել Վրաստանի Խորհրդային Գրողների Միության նախագահությանը տրամադրել Պ.Իաշվիլիի հակահեղափոխական, լրտեսական և չարամիտ գործունեության մասին տեղեկություններ»:

Անցնել աղբյուրներին՝ 3 4 5

Անցնել առաջադրանքներին՝ 23.1 23.2 23.3-23.7

Աղբյուր N3

«Նրանք՝ ովքեր ձգտում են մեզ պառակտել, նրանք՝ ովքեր խոչընդոտում են կառավարության առաջընթացին, նրանք՝ ովքեր յուրաքանչյուր օր զրպարտությամբ և ստորությամբ մեղադրում են նրան, նրանք՝ ովքեր ձգտում են կառավարության դեմ վտանգավոր միությունների, որոնք տոգորված են չար մտադրություններով, բռնկվող ակնածանքով և այն ամենով ինչը հակասում է ժողովրդի շահերին ու հայրենիքին, ձեր և հայրենիքի թշնամիներն են: Նրանք օտարերկրյա գործակալներ են»:

Մաքսիմիլիեն Ռոբեսպիեր, 1758 – 1794 թվականներ:

Անցնել աղբյուրներին՝ *1-2* *4* *5*

Անցնել առաջադրանքներին՝ *23.1* *23.2* *23.3-23.7*

Աղբյուր N4

Ստալինը շրջանառության մեջ դրեց «ժողովրդի թշնամի» հայեցակարգը: Այս հասկացությունը ավտոմատ կերպով ազատում էր կասկածյալ մարդուն կամ էլ մարդկանց գաղափարական սխալներն ապացուցելու որևէ անհրաժեշտությունից: Դա հնարավորություն էր տալիս յուրաքանչյուրին, ով ինչ-որ բանում համաձայն չէր Ստալինի հետ, ով միայն կասկածվում էր թշնամական մտադրություններում, յուրաքանչյուրին, ով ուղղակի զրպարտվել էր, ենթարկել դաժան բռնաճնշումների՝ ամեն տեսակ հեղափոխական օրինականության խախտմամբ: «Ժողովրդի թշնամի» հասկացությունը իրականում վերացրեց ցանկացած գաղափարական բախման և այս կամ այն հարցի վերաբերյալ սեփական տեսակետ ձևավորելու հնարավորությունը, նույնիսկ գործնական հարցերի վերաբերյալ: Որպես հանցագործության միակ ապացույց գոյություն ունեցող լեգալ համակարգի դեմ օգտագործվում էր հենց մեղադրյալի «խոստովանությունը»: Ինչպես ցույց տվեց հետագա քննությունը, «խոստովանությունը» ստանում էին մեղադրյալի նկատմամբ ֆիզիկական ճնշում գործադրելու միջոցով: [...] Նրանք, ովքեր անցյալում հետևել էին կուսակցության ուղուն, զոհերի վերածվեցին:

Հարկ է նշել, որ մարդկանց, որոնք ժամանակին հանդես էին գալիս կուսակցության ուղու դեմ, հաճախ բավարար լուրջ հիմքեր չէին գտնվում նրանց ֆիզիկապես ոչնչացնելու համար: Նման մարդկանց ֆիզիկական ոչնչացման նպատակով էլ ներդրվեց «ժողովրդի թշնամի» բանաձևը:

Նիկիտա Խրուշչով, Գաղտնի զեկույց, ԽՄԿԿ XX համագումար, 1956 թվական:

Անցնել աղբյուրներին՝ 1-2 3 5 *Անցնել առաջադրանքներին՝* 23.1 23.2 23.3-23.7

Աղբյուր N5

«Բռնապետական և տոտալիտար գաղտնի ծառայությունների միջև հիմնական տարբերությունը կայանում է «կասկածյալի» և «օբյեկտիվ թշնամու» միջև տարբերակման մեջ: «Օբյեկտիվ թշնամին» սահմանվում է կառավարության քաղաքականության կողմից, այլ ոչ թե կառավարությունը տապալելու իրական ցանկության համաձայն: Նա ոչ մի դեպքում այն անհատը չէ, ում վտանգավոր գաղափարները հնարավոր է հրահրել, կամ որի անցյալն արդարացնում է նրա կասկածյալ լինելը: Նա «միտումների կրող» է, ինչպես հիվանդությունների կրողը: Գործնականում, տոտալիտար կառավարիչը վարվում է այն մարդու պես, ով անընդհատ վիրավորում է մյուս մարդկանց, քանի դեռ բոլորը չեն հասկացել, որ այդ մարդիկ իրենց թշնամիներն են և, հետևաբար, կառավարությունը կարող է սպանել նրանց ինքնապաշտպանության նպատակով»:

Հաննա Արենդտ, «Տոտալիտարիզմի ծագումը», 1951 թվական:

Անցնել աղբյուրներին՝ *1-2* *3* *4* *Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

(1) **23.1 Համաձայն Հաննա Արենդտի տեքստի՝**

ա) Տոտալիտար կառավարիչը պայքարում է պետության թշնամիների դեմ՝ երկրի շահերը պաշտպանելու համար:

բ) Թշնամուն հնարավոր է սպանել այն դեպքում, երբ նա սպառնալիք է ներկայացնում պետության ֆունկցիոնալության համար:

գ) Տոտալիտար կառավարիչը հակադրում է հասարակությունը մարդկանց որոշակի խմբի հետ՝ հետագայում այդ խմբին հաղթահարելու նպատակով:

դ) «Օբյեկտիվ թշնամին» այն մարդն է, ով իշխանությունը տապալելու իրական ցանկությամբ հակադրվում է ողջ հասարակությանը:

Անցնել աղբյուրներին՝ *1-2* *3* *4* *5*

Անցնել առաջադրանքներին՝ *23.2* *23.3-23.7*

(1) **23.2 Համաձայն N4 աղբյուրի՝ ի՞նչ հետևանքների հանգեցրեց «ժողովրդի թշնամի» հասկացության ներմուծումը:**

ա) Պաշտպանեց երկրի լավագույն շահերը՝ բացահայտելով և ոչնչացնելով կասկածյալներին:

բ) Քննադատաբար տրամադրված անհատներին ընձեռեց գաղափարախոսական սխալները ապացուցելու հնարավորություն:

գ) Հիմնվելով ապացույցների վրա դատապարտեց համակարգի նկատմամբ թշնամաբար տրամադրված անձանց:

դ) Վերացրեց գաղափարախոսական հակասությունները և քաղաքացիների անձնական կարծիքը ամրագրելու հնարավորությունը:

Անցնել աղբյուրներին՝ *1-2* *3* *4* *5* *Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.3-23.7*

(1) **23.3** N1 աղբյուրի կիրառմամբ դատողություն արեք, թե ինչ քաղաքական նպատակներ էին նախանշում Մաքսիմիլիեն Ռոբեսպիերի N3 աղբյուրում արտահայտած տեսակետները:

(2) **23.4** Համաձայն Հաննա Արենդտի տեքստի՝ ո՞րն է տարբերությունը «կասկածյալի» և «օբյեկտիվ թշնամու» միջև: Դատողություն արեք, թե ի տարբերություն «կասկածյալի» ինչու է «օբյեկտիվ թշնամու» հասկացության ներմուծումը հեշտացնում տոտալիտար կառավարչի իշխանության ամրապնդումը:

(1) **23.5** Ըստ Նիկիտա Խրուշչովի՝ «նրանք՝ ովքեր անցյալում հետևում էին կուսակցության ուղուն, զոհերի վերածվեցին»: Դատողություն արեք, թե ինչ պատճառով կարող է սպանել տոտալիտար պետությունը նույնիսկ նրանց, ովքեր հետևում են «կուսակցական ուղուն»:

(1) **23.6** Աղբյուր N3-ում Մաքսիմիլիեն Ռոբեսպիերը կառավարությանը հակառակվող մարդկանց հիշատակում է որպես «հայրենիքի թշնամիներ»: Փաստարկներով դատողություն արեք, թե որքանով կարող է քաղաքացին պաշտպանել հայրենիքի շահերը և միևնույն ժամանակ քննադատել կառավարությանը:

(2) **23.7** Հիմնվելով N2 աղբյուրի վրա՝ դատողություն արեք, թե ինչպես է անդրադարձել «ժողովրդի թշնամիներին» հետապնդելու Ստալինյան քաղաքականությունը Վրաստանի հասարակության վրա: Դատողություն արեք ժամանակակից ժողովրդավարական պետության այն լծակների շուրջ, որոնք սահմանափակում են իշխող ուժերին աղբյուրներում նկարագրված քաղաքականությունն իրականացնելու հարցում:

Անցնել աղբյուրներին՝ 1-2 3 4 5 *Անցնել առաջադրանքներին՝ 23.1 23.2*